Արցախի Հանրապետության
կրթության զարգացման ռազմավարության
«Երկարօրյա դպրոց» ծրագրի

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ծրագրի նպատակներն ու սկզբունքները

Կրթության զարգացման նոր ռազմավարության նախագծի բաղադրիչների շարքում Արցախի Հանրապետության կառավարության կողմից նախատեսվում է իրականացնել «Երկարօրյա դպրոց» ծրագիրը, որի հայեցակարգը ներկայացվում է ստորև: Այն հենվում է միջազգային առաջադեմ փորձի արդյունքների, կրթական համակարգի արդարության ու մասնակցային կրթության սկզբունքների վրա:

Ծրագրի նպատակն է մասնակցային աշխատանքի, ժամանցի ու դասապատրաստումների միջոցով՝

- ամրապնդել դասի ժամանակ ձեռքբերված գիտելիքն ու հմտությունները,

- բարձրացնել կրթության որակը,

- չեզոքացնել ծնողների կողմից դասապատրաստման անհավասար պայմանները,

- ստեղծել սոցիալականացման և զբաղվածության նոր հնարավորություններ,

- ապահովել որակյալ ու բալանսավորված ամենօրյա սնունդ սովորողների համար,

- հաղթահարել քաղաք-գյուղ կրթական անհամաչափ զարգացումն ու

- Արցախի շրջանային համայնքները գրավիչ դարձնել քաղաքացիների համար:

Ծրագրի ներդրման արդյունքում նախատեսվում է 2-ամյա ժամանակահատվածում Արցախի բոլոր համայնքներում 18.312 աշակերտների համար կազմակերպել երկարօրյա ծրագրեր, որոնք կնպաստեն՝

- մասնակցային կրթությանն ու լրացուցիչ զբաղվածությանը,

- ծնողների կողմից գյուղացիական կոոպերացիաների հիմնադրմանը,

- գործնական հմտությունների ձևավորմանն ու համայնքային աշխատանքի աշխուժացմանը,

- ժողովրդագրության բարելավմանը:

«Երկարօրյա դպրոց» ծրագրի իրականացման հիմքում դրված է կրթական համակարգի բոլոր շահառուների մասնակցության սկզբունքը: Նախատեսված է, որ ծրագրին մասնակցություն կունենան դպրոցի մանկավարժական խորհուրդը, տվյալ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, ծնողներն ու սովորողները, դոնոր կազմակերպությունները, վերապատրաստող մանկավարժները, արտադպրոցական գործընկերները, սննդամթերքի անվտանգության վերահսկողության մարմինները, ինչպես նաև ՀՀ և ԱՀ կրթական լիազոր մարմինները:

«Երկարօրյա դպրոց» ծրագրի գնահատվող տնտեսական և սոցիալական տևական ազդեցությունը մի քանի անգամ ավելի մեծ է սոցիալական խնդիրների վերացմանն ուղղված օժանդակության ընթացիկ ծրագրերից: Ծրագրի ոչ մեծ ծախսերն ու դրական սիներգիաները ԱՀ կառավարության տնտեսական ծրագրերի հետ թույլ կտան իրագործել մասնակցային կրթության տեսլականը, մեծացնել համայնքների կրթական ու տնտեսական ներուժը և էապես խնայել սոցիալական ծախսեր:

Պիլոտային փուլը 20 դպրոցներում

«Երկարօրյա դպրոց» ծրագրի պիլոտային փուլն իրականացվելու է 2021թ. սեպտեմբերից Արցախի 20 համայնքների միջնակարգ դպրոցներում: Այդ համայնքներն են *Հաթերքը, Մաղավուզը, Բերդաշենը, Մաճկալաշենը, Աստղաշենը, Սարուշենը, Եղցահողը, Խրամորթը, Նախիջևանիկը, Պատարան, Խնապատը, Մեծ Շենը, Մոխրաթաղը, Վաղուհասը, Չափարը, Կիչանը, Աշանը, Կարմիր Շուկան, Թաղավարդ Կալերը և Սոսը*: Յուրաքանչյուր գյուղում երկարօրյայի հայեցակարգը ձևավորվելու է մանկավարժական, ծնողական համայնքի և արտադպրոցական

գործընկերների մասնակցությամբ: Նշված 20 դպրոցներում սովորում են 2110 աշակերտներ:

«Երկարօրյա դպրոց» ծրագրի աշխատանքային խումբն արդեն իսկ այցելել է նշված 20 դպրոցները, հանդիպել է դպրոցի տնօրենության, մանկավարժների և համայնքապետերի հետ: Դպրոցների և ծնողական համայնքի արձագանքը դրական է: Նշված դպրոցներում կատարվել են տարածքի և պայմանների անհրաժեշտ ուսումնասիրություն և չափումներ նախագծման համար, գտնվել են անհատական լուծումներ յուրաքանչյուր դպրոցի համար: Պիլոտային փուլի նախահաշիվների մի մասն արդեն փոխանցվել է դոնոր կազմակերպություններին:

Համայնքները մասնակցություն կունենան սեփական շինությունների, ենթակառուցվածքների, համապատասխան հաստիքների, տրանսպորտային միջոցների և այլ տեսքով: Ծնողները մասնակցություն կունենան սննդի կազմակերպման ծախսերի խորհրդանշական համաֆինանսավորման տեսքով:

Երկարօրյա դպրոցի դասասենյակների և ֆիզիկական պայմանների արդիականացումը

Երկարօրյա դպրոցների մոդելային սենյակների (1-3) արդիականացման և կահավորման (յուրաքանչյուրի համար՝ 15. 000-25.000 ԱՄՆ դոլար) և տաք սննդի ապահովման համար ճաշարանի (խոհանոցի ու պահեստի) վերանորոգման, սարքավորումների ձեռքբերման ու տեղադրման ծախսերը (առավելագույնը՝ 11.000 ԱՄՆ դոլար) կատարվելու են բարեգործական ու կրթական կազմակերպությունների միջոցներով: Համապատասխան քննարկումները «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Թուֆենկյան հիմնադրամի և այլ կազմակերպությունների հետ արդեն սկսվել են և առկա է մեծ հետաքրքրվածություն: Այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը լինելու է տվյալ դպրոցի անվանական դոնորը և «Երկարօրյա դպրոցի» գործընկերը: Ծրագրի համար նախատեսվում է կազմակերպել համահայկական հանրային արշավ:

Երկարօրյա դպրոցի անձնակազմը

Ներգրավվող բոլոր մանկավարժները, մասնագետներն ու համակարգող փոխտնօրենները նախապես խմբային վերապատրաստում են անցնելու **«Մասնակցային կրթության և երկարօրյա ծրագրի կազմակերպում»** մոդուլի շրջանակում՝ վերապատրաստող փորձագետների կողմից: Երկարօրյա դպրոցի նոր անձնակազմը վերապատրաստվելու է Արցախի ԿԳՄՍՆ և երրորդ

աղբյուրների միջոցներով: Երկարօրյա ծրագրի համակարգումն իրականացնելու է դպրոցի փոխտնօրենը, վերահսկողությունը՝ տնօրենը: Բացի այդ, նախատեսվում է կարողունակությունների վրա հիմնված ուսուցման մասին վերապատրաստում կազմակերպել տվյալ դպրոցի մյուս ուսուցիչների համար:

Դպրոցի մանկավարժական հայեցակարգը

«Երկարօրյա դպրոցը» չպետք է դիտարկել որպես առանձին կառուցվածքային տարր, այլ որպես տվյալ համայնքում իրականացվող կրթամշակութային ու ժամանցային գործունեության ամբողջական շրջանակ, որը համակարգվում է դպրոցի կողմից: Յուրաքանչյուր դպրոցի երկարօրյա ծրագիրը ձևավորվում է տեղում անհատական մոտեցման կիրառման միջոցով: Այդ ծրագրի հաջողությունը կախված է վարչական և մանկավարժական աշխատողների և մյուս շահառուների նորարար և ստեղծագործ մոտեցումներից: Երկարօրյա դպրոցների գործունեության համար անհրաժեշտ են լրացուցիչ բյուջետային միջոցներ, որոնք նախատեսվում է ներգրավել ՀՀ պետական բյուջեից և ԱՀ պետական բյուջեի միջոցներից:

Յուրաքանչյուր դպրոց մշակում է սեփական մանկավարժական հայեցակարգը, որը քննարկվում և հավանության է արժանանում տվյալ դպրոցի մանկավարժական խորհրդում: Հայեցակարգի մշակման փուլում հաշվի են առնվում համայնքում առկա ուսուցման և ժամանցային հնարավորությունները և ներգրավվում են դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդները, ինչպես նաև այլ խորհրդակցական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմնի, կրթամշակութային կազմակերպությունների, արտադասարանական խմբակների ներկայացուցիչները և արտադպրոցական գործընկերները:

Ընթացիկ բյուջետային ֆինանսավորումը

Երկարօրյա դպրոցների գործունեության համար անհրաժեշտ են լրացուցիչ բյուջետային միջոցներ, որոնք նախատեսվում է ներգրավել ՀՀ պետական բյուջեից և ԱՀ պետական բյուջեի միջոցներից: Այդ միջոցները նախատեսված են յուրաքանչյուր դպրոցում միջինը մեկական դրույքի ավելացման (1-ից 5 մանկավարժ) և սննդի կազմակերպման ծախսերի համար:

Իրավական կարգավորումները

Արցախի Հանրապետության կառավարության կողմից մշակված *«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում*

երկարօրյա ծրագրի կազմակերպման կարգի» նախագիծը կցվում է: Այն նախատեսված է ընդունել առաջիկայում:

«Երկարօրյա դպրոց» ծրագրի գործընկերները

Բացի ՀՀ և ԱՀ պետական գերատեսչություններից՝ Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունը «Երկարօրյա դպրոց» ծրագրի շրջանակում նախատեսում է համագործակցել «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի, Կրթական քաղաքացիական նախաձեռնության, «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի, կրթության փորձագետների և այլ մասնագետների հետ: